

THE  
DICKRIS PUBLISHING CO.  
628 Third Avenue,  
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿԱՆԵՐԸ ԲՍՑ  
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՒՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
**ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**

Ա. ՏԱՐԻ, ԹԻԻ 4

ՆԻՒ ԵՈՐԲ, ԴԵԿՏ. 4, 1897

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

**ԱՆՑԵԱԼ ՇԱՐԱԹ ԵՐԵԿՈՅԵԱՆ,  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՐ**

Անցեալ եօթնեակը արկածալից շարաթ մը եղաւ քաղաքին Հայ ժողովրդեան համար: «Եպիսկոպոսի խընդիր, Հոգաբարձութեան, Գահանայի և այլ յոյի և յուսաբարութեանց խնդիրներ հետզհետէ եկան ժողովրդեան միտքը յուզեալ պահելու համար: Այս բոլոր դէպքերն ըստ արժանւոյն քննելու և նկարագրելու համար ՏԻԳՐԻՍԻ սինդիկատը շատ ու շատ անձուկ կը գտնենք. Համանուն գետի ալիքներուն պէտք ունինք այս խնդիրներու քննարկումն մէջ խնդրելու համար:

Պատ. Յակոբեան գուցէ միակ անձն է քաղաքին Հայ գաղթականութեան մէջ, որ տեղական անապարանքը չէ ուզած որդեգրել: Պատուելին ուրիշներուն պէս չի վազեր՝ ըստ երկրի սովորութեան այլ կը քայլէ Հայուն մը պէս յամրաքայլ: Սակայն անցեալ շարաթ երեկոյ Պատ. Յակոբեան փոխառած էր բոլորովին: Ուրիշ Հայուն մը հետ տունէ տուն, փողոցէ փողոց կը վազէր շնչառապա: Արտաքոյ կարգի բան մը պատահած էր: Չորս փողոցի եկեղեցւոյն ժամկոչը կը փնտռէին ասոնք, որոյ արամադրութեան տակ կը գտնուէին նոյն եկեղեցւոյն ժողովարանը, ուր Աղգ. Հոգաբարձութիւնն քաղաքին Հայերը նիստի հրուարած էր նոյն երեկոյ, կարևոր երկու խնդիրներու համար: Ժամկոչը չը կար սակայն, առանց որոյ գիտակցութեան ու բանալիին ժողովարանը անկարելի էր բանալ: Աղգ. Հոգաբարձութիւնը մտապահ էր ժողովարանին համար կարգադրութիւնը ընել, աստեղագէտին պէս որ աստղերը չափած ասեն առջևի փոսը չէր տեսներ. բայց այս խնդրոյն մէջ ամէնքս միասին փոսն ինկանք—փողոցները մնացինք գիշեր ժամանակ:

Աւելորդ է ըսել թէ ժողովուրդը զայրացած էր այս միջադէպին համար: Հոգաբարձութեան դէմ բողոքներ կը լսուէին ամէն կողմէ: Երբ սիրտը կը ցուէ, լեզուն կարելի չէ սանձել, մանաւանդ Ամերիկայի մէջ, ուր խօսիլը ազատ է բոլորովին: Արժ. Վաղինակ Վարդապետի զարմանքն ու ցասումը նուազ չեղաւ երբ նորին Արժ. Հանդիսավայրը—փողոցին սալայտակները—հասաւ, բայց ջանաց ծածկել իր արդար բարկութիւն. դէմքին վրայ կարելի էր կարգալ «Եթէ եկեղեցական չըլլայի...»:

Կարճ խորհրդակցութենէ մը վերջ ուրիշ սրահ մը վարձուեցաւ, լաւ և է ըսել անզարդ ու անուշ մի անձ սենեակ: Մեծ ժողովը հոն տեղի ունեցաւ, որոյ ներկայ եղան

անոնք միայն որք յուսահատած տուն չէին վերադարձեր: Մեծ գործերը պզտիկ տեղերէ կը ծնին կրսեն Հայաստանցիք, բայց այս անգամ պզտիկ տեղէն հագրու պզտիկ գործ մը յառաջ եկաւ:

Ժողովոյ առաջին խնդիրը եղաւ Հոգաբարձութեան հրատարականք, որ լուծուեցաւ կարճ ժամանակի մէջ: Ժողովը հինգ անդամներէ բաղկացեալ անուանիչ յանձնախումբ մը կազմեց եւսպատիկ ընտրելաց ցանկ մը պատրաստելու պաշտօնով: Յանձնախումբի անդամներն եղան Տրք. Գրնգուրի, Էրմոնեան, Չարչաֆճեան, Էկինեան և Չըպուզճեան:

Օրակարգի երկրորդ խնդիրն չի ծնած սպաննուեցաւ: Հոգաբարձութիւնն յայտարարեց թէ ինքն արտաքին չէր մէկը հրաւիրագրերուն մէջ այդպիսի խնդիր մը դնել: Պ. Ալէոն, Հոգաբարձութեան անդամներէն մին, ջանաց տպագրչին վրայ բառնալ պատասխանատուութիւնն. բայց որովհետեւ Հոգաբարձութեան աստեղագիտին նոյն մարմնոյ պաշտօնական կինքով կնքած էր ծանուցումներն, Պ. Ալէոնի ամբաստանութիւնն ո՛ր և է կշիռ չունեցաւ: Հետեւաբար Հոգաբարձութեան կը մնայ «Թողել զմեռեալս իւրեանց» և յարմար առթիւ գահացուցիչ բացատրութիւն մը տալ այս մասին յուսախոր ժողովրդեան:

Այս տարօրինակ դէպքը պիտի կրնար մեծ շփոթութիւն յառաջ բերել, եթէ Վարդապետի ներկայութիւնը ժողովրդի ցասումն սանձած չըլլար այդ երեկոյ: Ներկայք կըլլեցին այս դեղահասարձայն մասնակներուն պէս որոց քիթը կը սեղմեն բերանին բանալ տալու համար: Արժ. Վաղինակ Վարդապետ, ժողովրդին յուզումը տեսնելով, որ փոթորիկ կսպառնար, խօսք առաւ այս առթիւ, ու ցոյց տընուաւ թէ որչափ վնասակար էր մի Եպիսկոպոս բերել տալ նիւ Երբքի կամ Ամերիկայի Հայոց համար: Նորին Արժանապատուութիւնն վնասակար ու աղէտաբեր կը կարծէր բարձրաստիճան եկեղեցականի մը ներկայութիւնն յԱմերիկայ. կը խորհէր թէ ժողովուրդն Եպիսկոպոս մը կուզէր նախատեսելու համար զայն իր պարտիք ընթացքով, զոր ցոյց տուած է եղեր շատ անգամ իր եկեղեցականաց դէմ: Դրամի խնդիրն կարևոր փաստ մ'էր Վարդապետի ապացոյցներուն մէջ:

Ժողովուրդը, ի յարգանս իր եկեղեցականին, ոչինչ խօսեցաւ, թէ և կը թուէր թէ ըսելիքներ շատ ունէր... Ժողովն, սրոյ ատենապետեց Տ. Քէլէկեան, ցրուեցաւ յուսախոր:

**ԶԳԱՒՈՐ ԸՆՏԱՆԻՔ ՄԸ**

Անմիջական օգնութեան կարօտ Հայ ընտանիք մը կայ քաղաքին մէջ, որ ժամանակին բարեկեցիկ վիճակ մ'ունի եղեր ի Հայրենիս: Այս ընտանիք նիւ Երբք հասած է քանի մը ամիսներ առաջ, ի հարկէ մեծամեծ յոյսերով. Սոցա հայրը, որ Պարսկաստանի մէջ երկար ատեն դասատուի պաշտօն վարած է, շարաթներով անգործ մնալէ վերջ, կը յաջողի վերջնապէս գործ մը ձեռք ձգել, որ թէ և անյարմար իր արժանեաց, բայց գոհացուցիչ էր ընտանիքի օրասահիկը հայթայթելու համար: Սակայն օր մը, Ֆիզիքական այսօրինակ աշխատութեանց անվարձ վարձապետը ձեռքը վերադարձնելով տուն կը դառնայ: Այդ օրէն ճիշդ աղքատութիւնը կսկսի ըզգալի դառնալ. բայց դժբաղդութիւնը կատարեալ ըլլալու համար հիւանդութիւնն ալ վրայ կուգայ: Ամիսէ մը աւելի է որ այս անձ անկողնոյ կը ծառայէ: Քաղաքին Հայ բժիշկներէն Տոքթորք Սիւնի, Այվազեան և Բարունակեան աղքատիւներ խնամած ու դարմանած են այս հիւանդը՝ երբեմն նիւթական օգնութիւններ ալ ընելով: Սա ընտանիքը առայժմ կը բազմանայ չորս անձերէ—այր, կին և երկու զաւակներ—բայց քանի մը օրերէն սոցա թիւն հինգի կը բարձրանայ նորածնի մը գալստեամբ: Իրաց այս փափուկ վիճակին մէջ ըսել աւելորդ է թէ աղքատութիւնն ու հիւանդութիւնն ինչ կը նշանակեն շուարեալ աիկնոջ համար: Մնացեալը դիւրին է գիտնալ:

Լրագրոյս վարչութիւնն նկատի ունենալով այս ամէնն, հանգանակութիւն մը կը բանայ այս առթիւ, և կը խնդրէ ժողովուրդէն մասնացիլ ըստ կարի: Հանգանակութեան արդիւնքը պիտի հրատարակուի մանրամասնաբար Ընտանիքի անունը չենք ուզեր տալ, բայց եթէ հարկը պահանջէ, նամակաւ կը հաղորդենք փափաքողաց:

**ԱՐԵՒԵՒԵԱՆ ԶՄԱՐԱՆ**

Որովհետեւ մեր ծառարանի կերակուրները յատուկ խնամով կը պատրաստուին, մեր քով Պորտը երկու Տօլար է. երեք ու կէս Տօլր թիքէթը երեք Տօլար:

Նախածաշ—2 հաւկիթ, սուրճ, և կարագ:

Օրական 3 պնակ կերակուր:

ՅՈՐԴԱՆԱՆ, 154 Իսթ 27րդ փողոց:

**ԹԱՆԳԱՐԱՆԻ ՄԱՍԻՆ**

Նիւ Երբք, Նոյ. 25-  
Որչ'ափ ուրախալի է լսել որ նիւ Երբքի քանի տարիներէ իվեր թափառաւրջիկ Հ. Ե. Գրադարանը վերջապէս այսօր հաստատուն հիման մը վերայ դրուելու ձգտած է: Մենք հայերս հետզհետէ մեր սխալները ուղղելու և մեր սկար քայլերը յառաջացնելու շաւղին մէջ ենք. ուրեմն Գրադարանի վարչութիւնը որ և է ջանք պիտի չը խնայէ անոր յառաջացման ու գործնալուսն միջոցներ գտնելու: Թող Ուսթըրը և Նաշուէն մեզ նիւ Երբքիներու ուղղեցոյց մը ըլլան, որոնք ամեն միջոց կը գործածեն յօգուտ Գրադարանի յառաջացման: Ամեն ասորի աղգային Հանգանակութեան կայացնեն ինպատ Գրադարանին: Ուստի նիւ Երբքի Հ. Ե. Գրադարանի վարչութիւնն ալ թող աշխատի Հայ երիտասարդներէն մի գերասանական խումբ կազմել, որ թէ՛ ազգային թէ՛ այլ և այլ ներկայացուցիչներ ստան ինքնապատ Գրադարանին, որով թէ՛ Հայ ժողովուրդի միտքը կը լուսաւորուի և թէ՛ ազգային եռանդը վառ կը մընայ իւր մէջ: Եւ Հայերը փոխանակ իրենց դրամը այլ և այլ անօգտակար կերպերով գործածելու պիտի փութան այս ամենաօգտակար գործին նուիրելու:

Մեր առջև մեծ ասպարէզ մը կայ ու պատեհութիւն մը ինքզինքնիս զարգացնելու: Ինչու դանդաղիք, ազգի մը զօրանալուն էական միջոցը ընթերցանութիւնն է, որը մեծ հըրաչքներ կը գործէ: Թող շարժի Հայ երիտասարդութիւնը, մեր ազգին ապագան մեզմէ կսխառ մ ունի: Զանանք գրադարանի զօրացման:

Ս. ԱՒԵՏԻՍԵԱՆ

**ՀԱՅԿԱԿԱՆ ԶՄԱՐԱՆ**

27 ՆԻՒԱՆՏ ՍԹ. ՊՕՍԹՕՆ, ՄԱՍ.  
Այս ճաշարանին մէջ կը պատրաստուր տուին Արևելեան ամենամաքուր և համեղ կերակուրներ. մեր գիները խիստ համեստ են. ճաշարանին Տիփօներուն ալ մօտ է. ՊՕՍԹՕՆ այցելող Հայրենակիցներ շատ գոհ պիտի մնան:

**ՆԱԽԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ**

Երէկ հասած են  
ԱՄԵՐԻԿԱՅ ԼՈՆՏՈՆԷՆ,  
ՔԱՄՓՈՒՆԻԱ ԼԻՎԸՐՔՈՒՎԷՆ,  
ՏԵՕՉԼԱՆՏ ՀԱՄՊՈՒՐԿԷՆ,  
Այսօր կսպասուին  
ՅՕՆԻՇԻԱ ՀԱՄՊՈՒԿԷՆ,  
ՈՒԷՐԲԸՆՏԱՄ ԲՕԹԵՐՏԱՄԻՆ,  
Վաղը գալիք.  
ԱԱ ՊՐԻԹԱՆՅԵՆԸ ՀԱՎՐԷՆ



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի մէջն Շարաթ օրեր ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմէն:

Թ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, . . . . . ԳԱՆՁԱՊԵՏ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ

Table with 2 columns: Ծախ. (Expenses) and Սէնթ (Cents). Rows include Զարեկան (1 50), Վեցամսեայ (75), Եռամսեայ (40).

ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ Զարեկան 10 Փր. Բաժանորդագիրն կանխիկ է: Հասցէ՝

To the DICKRIS PUBLISHING CO., 638 Third Ave., New York City.

ՆԻՒ ԵՈՐԲ, ԴԵԿՏ. 4, 1897.

ՀԱՅՈՒ ԳՈՐԾ

Երբ մէկը առևտուրի մէջ չափազանց կծծիւթիւն ցոյց տայ ու խափել փորձէ, զայն Հրեայ կանուանեն, զի ասոնք Հրէից ազգային յատկանիշներն ճանչցուած են աշխարհիս այն կողմերն, ուր Իսրայէլի զաւակուքը առիթ ունեցած են ապրիլ ուրիշ ազգերու հետ: Այսպէս ալ երբ մէկը մի սխալ և անխորհուրդ քայլ առնէ ազգային, ընկերական կամ անհատական գործոց մէջ, այդ սխալը լաւ բացատրելու համար, Թուրքերն զայն կանուանեն՝ Հայու Գործ: Եստ անգամ Հայք իրենք իսկ ուրիշին սխալ արարքը «Հայու Գործ» կը կոչեն՝ գործին արժանիքը բացատրած ըլլալու համար:

Թէ երբ և ինչպէս ծնունդ առած է այս սովորութիւն, անկարելի է գիտնալ, բայց յայտնի է թէ անյիշատակ ժամանակներէ ի վեր մեր սխալ ու ձախող ձեռնարկներն ի Հայրենիս, առիթ տուած են այլոց, մանաւանդ Թըրքաց ուրիշ սխալին բացայայտիչը գտնել այս արտայայտութեան մէջ, — Հայու Գործ:

Աւելորդ է ըսել թէ մեր անուան այս կերպ գործածուիլն ցաւալի բան մ'է ամէն Հայու համար, բայց երբ մտածենք թէ մենք առիթ տուած ենք այլոց այսպէս մտածելու Հայ ազգին վրայ, մեզ կը մնայ իրաւունք տալ անոնց, և միւս կողմէ մեր այդ յոռի ընթացքը փոխելու ջանալ:

Իրաւ է որ ամէն ազգի մէջ սըլխալներ կը գործուին, բայց «մէկ սըլխաղի համար մարդ չեն կանխի»: Երբ արտի մը մէջ որոմը ցորենէն շատ աւելի առատ ըլլայ, այդ արտ որոմի ցանք մը կը դառնայ:

Առանց ծանրանալու անհատական և ընկերական խնդիրներու վրայ, բաւական կը սեպենք թղթատել անգամ մը մեր ազգային ժամանակակից պատմութեան քանի մը թերթերը միայն, փնտռելու համար զէպք մը որ նայապալս պատրաստուած հաստատուն հիման մը վրայ կառուցեալ

բոլոր: Ցաւ է գտնել հոն անուրանալի ճշմարտութիւնը թէ մեր շինած բարոյական շէնքերու հետքերն անգամ չ'կան այսօր հրապարակի վրայ, բայց քանի մը քայլաւորութիւններէ որք շատ քիչ են իրողութիւնը փոխելու համար: Հարկ չ'կայ այս առթիւ մասնաւոր զէպքեր մատնանիշ ընել, զի մեր պատմութիւն ձախող զէպքերու հարուստ ցուցակ մըն է ապագէն:

Եթէ ձեռք առնենք Ամերիկայի Հայ Գաղթականութիւնը, ու քննենք անոր ազգային կեանքը, հոն ալ նոյն սխալը ճշմարտութիւններն երևան կուգան՝ մեզի դէմ բողոքելու համար: Վայրկենական սպաւորութեանց ազդեցութեան տակ շատ անգամ բռնկած ենք հոս, բայց չոր խոտին մէջ ինկած կրակին նման քիչ մը ատենէ վերջ մարած ենք, սփ մը փոշի միայն թողով հովին խողովիք:

Մեր անհատական և ընկերական գործոց մէջ ևս նոյնն է մեր կեանքը: Հայ ազգի դժբաղդութեանց մին է այս: Ինչ կը մտածենք մեծ ձեռնարկի համար. շուտ կ'որոշենք առանց գործի ծանրութիւնն կը ընելու. սուս շինելու կը ընենք, առանց հիման վրայ մտածելու, որ թէ անտես, բայց շէնքի ամենակարևոր մասը կը կազմէ: Եւ այս կերպով սկսուած ձեռնարկներու հետեւութիւնք պատճառ տուած են այլոց՝ մեր անունը սխալի հոմանիշ մը նկատել: Եթէ Հարունակներ արջապէս ընթանալ, որ մը նշխարհի բառարանին մէջ Հայ անուան առջև նոր նշանակութիւն մը պիտի աւելցնեն:

Հիւանդութիւնք իրենց յատուկ դեղն ունին. ազգային հիւանդութեանց ալ դարմանները կան: Այս թեթեւ կերպիւր որոշելու և գործի սկսելու հիւանդութիւն, որ իր արդիւնք սկսած է զգալի կերպիւր. հրապարակ բերել, ժամանակ է որ ճարտար բժշկներու ձեռնաց մէջ յատուկ խնամք ստանայ քանի որ ժամանակը անցած է բոլորովին: Հայ կղերք, Քարոզիչք, Պատուելիք և հասարակութեան մեծ Դաստիարակը—մատուրը—կողում ունին մեծ դեր մը կատարել այս կարևոր խնդրոյ մէջ: Սոցա պարտականութիւնն է մատնանիշ ընել ժողովուրդի սխալն. խրատել զայն միշտ, ձաղկել երբեմն, և զգուշացնել ձախող քայլերէ, որոնք առիթ տուին այլոց ստեղծելու այս անխախտելի արտայայտութիւնը—«Հայու գործ»:

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

«Հայրենիս ու մայրենիս անգութ Թուրքերը և Բիւրտերը ջարդեցին, մեզ ալ մեր հարազատ ազգակիցները յախտնական կերպով սպաննեցին...»: Ահա ամենաազդու անէծքի մեղադրանքը որ Հայ օրերը պիտի բերեն, իբրև օրհնութեան պըսակ, մասնաւորաբար Հայրենիքէն դուրս ապրող Հայերուս գերեզմաններու վրայ, երբ անոնք արդէն մեծցած որբեր պիտի լինին, ամենաթշուառ հակներ, օտարացած ազգէն, անոր լեզուէն, կրօնքէն, բարքերէն, ամեն բանէն: Սակայն հողեքանական տխուր խորհուրդի բողոքներուն միայն, այս ամենազ ժողովներէն ոմանք պիտի ուշաբերեն իրենց անցեալը. պիտի յիշեն իրենց Ազգի և Հայրենիքի յիշատակներէն բեկորներ միայն. պիտի յուզուին երբ ներքին ձայն մը իրենց պիտի փսփսայ «Գուց

ինչ էիք... ինչ կըլար... ո՞ր ազգի, ո՞ր հայրենիքի զաւակները, հիմայ ու՞ր կ'ապրիք, սր՞ու հեա կը կենակցիք, ինչ լեզուով կը խօսիք, ո՞րու դաւանանքի կը հետևիք, Օ՛հ, այս ազդեցութեան ճնշումներուն տակ պիտի ցայտէ կուրծքէն այս օրհներգը... «Մեզ ալ մեր ազգակիցները սպաննեցին իրենց սոսկալի անտարբերութիւնով...»:

Կուզէք մոռնանք ընդհանուր ազգի օրերը, Մայրահայրենիքի բոլոր օրերը, ուրտեղ ամէն մէկ նահատակուած հօր ու մօր սև հողին վրայ ինկած ջախջախուած դիակներուն քով կը շրջին մէկէ աւելի որբերու ստուերները, մոռնանք ստոնք, արդէն մոռցած ենք ամէն բան...: Աչքէ հեռու սրտէ հեռու «սպրած» այդ ոչորմէլի արարածները դուցէ չեն գըրգեցներ մեր քարացած ըզգացումները. հեռու՛ն, հեռու՛ն այնքան թշուառութիւններ կան որ...:

Կարելի՞ է չը ստանել, սակայն, մեր աչքին ու սրտին առջև ամէն օր, ամէն բողոք թափառող դժբաղդացած հրեշտակներու դառը, այս օրերու խումբը: Առէք մ'իմակ նիւ ետքը, Հայրենակ թաղերը այցելեցէք օր մը, Եսէր ինչ բանի որ կուզէք. պատճառաւ լաթերով, անտակ կօշիկներով, ծակոտած գլխարկով, գունատ, թուլ ցած, մեծ մարդու մը պէս թախիծը միշտ երեսին, միմակ մանկական ժպտի մը հետ խառնուած, կը տեսնէք Հայ տղան և Հայ աղջիկը, Հայ սղանները և Հայ աղջիկները...: Կարծես թէ իրենք ալ Հասկցած են թէ լոկ մանկական քմահաճոյքները կատարելու ձեւակերպութեան մը համար է միայն որ կը վազվզեն, կը խաղան, կը ծեծկուին, կը պոսան, կը կանչեն, դատարկուած ստամոքսով կը վազեն վեր, անօթի սպասող մօր մէն հաց ուզելու Օ՛հ, լսած է՞ք Հայ պզտիկ օրիորդի մը սրտածմլիկ յանդիմանութիւնն որ կուղղէր անցեալները մօրը, կարմրուած երեսներով, սև մաղբրով, հաստ սև յոնքերով հրեշտակուհին կըսէր՝ «Հաց ուանք, առաւօտ ալ չը կերանք, հիմայ գիշեր է, երբ պիտի գայ ժամանակը, մայրիկ...»:

Երբէ՞ք չափազանցութիւն չ'է հաշուել թէ նիւ ետքի և Մասաչուսէթ նահանգներու մէջ այժմ 150 է աւելի Հայ օրեր կան. օրեր, այո՛, քանիներ անծնողք օրեր են, իսկ միւսները օրեր չեն ինչ են, երբ նիւթապէս անկարող ծնողներու զաւակներ են: Այս 150 օրերը, շատ չէ՛, 10 տարիէն, 10ը հասը միայն պիտի կրնան խօսիլ իրենց լեզուն, 5 հատ միայն պիտի մնայ ճշմարտ Հայ միւսները Ամերիկեան նախակրթարաններու և փողոցներու մէջ սկսած են արդէն թոթով լինել. լեզուներ քիչ մը վերջը ստոնք կը մոռնան մայրերնու նոր սորվեցուցած լեզուն. դուցէ ստոնք պիտի երթան գործարաններու անդուռներու մէջէն խամ մը հաց ճարելու իրենց եղկելի ապրուստին համար: Օ՛հ Ամերիկեան գործարաններ՝ Հայ տղաներ, պարիներ՝ վանոնց մէջ տանջուիլ, ամենազտատ մթնոլորտէն շրջապատուած, յուսալ թէ անոնցմէ օր մը այս օրերը դուրս պիտի գան մեծցած Հայեր, Օ՛հ...»:

Ինչո՞ւ, ինչո՞ւ ողջ ողջ մեռցնել այս նորատի հօգիները, մեռցուցած էք նոյնչափ անմեղ թռչնիկներ, խամբոցուցած էք նոյնքան վարդի կոկոններ, ջարդած էք նոյնչափ պղզտիկ հրեշտակներ:

Ինչ ընելու է այս արարածներուն համար, որոնք կ'ապրին ցոյց տալու համար թէ Աստուած դժբարոյներն ալ ստեղծած է. Եւ ո՞վ ընելու է:

Ամէն բանէ առաջ պէտք է հաւաքել օրերը նիւ ետքի և Մասաչուսէթ նահանգներուն մէջ լեզու գիւղի մը ածան վարձքով տան մը մէջ, անմիջապէս տալ անոնց պարզ առատ կերակուր, մաքուր օդ, տաքուկ լաթեր. անմիջապէս վերջ պէտք է ըսկախ սորվեցնել իրենց Հայրենիքի ընթերցանութիւնը, նախնական բերականութիւնը, պէտք է աւանդել անոնց Հայ տարրական պատմութիւնը, պէտք է Հայկական նախնական դաստիարակութիւն մը տալ իրենց, պէտք է կանչել այս երկիրը վերջերս գաղթող Հայ Բրոքիտուներէն, Ուսանողներէն և Բժիշկներէն մէկ քանին, պէտք է յանձնել ասոնց Որբանոց-գարոցի ներքին կառավարութեան բոլոր հոգերը, պէտք է... Այո՛, պէտք է...:

Կանցին 3-4 տարիներ, Որբանոց-գարոցէն դուրս եկողները, այն ատեն կրնանք ըսել հայու զաւակներ են, այն ատեն շատ քիչ է օտարանալու անհաւի վտանգին քանդումները, և կը լինի որ այն ժամանակ թէ՛ օրերը և թէ՛ մենք այս ստապանքի երկրէն արդէն հեռացած ենք կամ կը միկնինք մեր երջանկութեան Հայրենիքը:

Ո՞վ ընելու է այս ամենակարևոր ձեռնարկութիւնը...: Հին Հայ ազգայնականութեան ամեն մէկ անհատը: Ուրիշ ազգերու մէջ կընեն կղերականութիւնը, մամուլի ազդու մէկ թերթը, բարեսիրական ընկերակցութիւնները. մեր մէջ ստոնքմէ ո՞ր պիտի ընէ: Հայ կղերականութիւնը անկարող կ'զգայ ինքզինքը. որովհետև կ'առարկէ թէ չօգնելու իրեն ժողովուրդը. ընկերակցութիւն չկայ արդէն. իսկ Հայ թերթ մը ընաւ այն բարոյական բարձրութեան վրայ չէ ժողովուրդին առջև. Հրեայի թերթ մը բարեսիրական ահագին ձեռնարկներ կընէ նոյն ետքի մէջ, ժողովուրդը Հայ թերթին այնքան վստահութիւն չունի: Ո՞վ ընելու է պէտք է կրկնել թէ ժողովուրդը իւրաքանչիւր քաղաքի Հայերը կը հանգստանալեն գուժար մը. երկու ամիսէն ամեն քաղաք կը դրկէ իր ներկայացուցիչը և դրամը որոշեալ քաղաքի մը մէջ ընդհանուր ժողովի մը որուն մէջ կորոշուի յանձնախումբ մը, որուն կը յանձնուի Որբանոց-գարոցի մը հաստատուելու բոլոր մանրամասնութիւնները:

Չը մոռնանք, սակայն, օրհներգը: ՈՄՆ

Կ Ա Ր Մ Ի Ք Ն Ե Ր

Փրօֆ. ԵՃԻԼԵԱՆ ԿԸ ԳՐԷ. Նիւ Ետք, Նոյ. 25, 97.

Խմբագիր Տէր, Մեծ ուրախութեամբ կարդացի ՏԻԳՐԻՍԻ առաջին թիւն: Թոյլ տուք ինձ որ շնորհակալութեամբ շնորհաւորեմ զեռազատ ՏԻԳՐԻՍԻ առաջին գլխաւորները և մաղթեմ յաջող պարագիծայ և երկար ճամբայ: Ամէն ինչ որ Հայոցն գոյութեան կը նպաստուի, այնուրախութիւն կը պատճառէ ամէն Հայու և անկեղծ շնորհակալեաց արժան է: Լրագրութիւնն ազգի մը գոյութեան անհրաժեշտ միջոցներէն մին է:

Մենք, Հայերս, այն ատեն Հայրենեաց բարոյութեան և զարգացման կրնանք վստահութեամբ սպասել երբ:

ՏԻ Գ Ր Ի ՍՆ՝ Հինաուրց և արքայա- շէն Տիգրանակերտի պարիսպներու տակէն հեզասակ գլորեւով իւր եզ- րերն բեզմաւորէ իւր հարաւային ընթացքով, երբ:

ԵՓՐԱՏՆ՝ իր հիւսիսային ընթաց- քին մէջ Հայկական լեռանց բար- ձունքներէն խոխոջեւով գահավիժի, և իւր գլով ու ջինջ ջրով իր ափանց վրայ գտնուող նոր և հին տխուր յիշա- տականքով լի Բարբերդն՝ անոր ան- ուանակից ուսուցիչներն, Ակն, Ա- րարկիրն և այլ բազում Հայկական արաններն ու քաղաքներն կազդու- րեւով և ոտոզեւով փութայ իւր եզ- րոր ՏԻ Գ Ր Ի ՍԻ միանալու, և երբ:

ՀԱՅՔ այս երկու Հինաուրց և բեզմաւորիչ գետերու մէջտեղ և ա- փանց վրայ խաղաղութեամբ և դա- րաւոր հայրենական սովորութեան համեմատ հայրենաց հողը մշակեն՝ ամէն ջանք իգործ գըննելով, նոյն ա- տեն, որ բռնակալն իր դիւային մե- քենայութիւններէն, զրկանքներէն և և կողոպուտներէն դազարի:

Մնամ յարգանք

Ե. ՄԵՍՐՈՊ

Նիւ Եորք, Նոյ. 27, 97.

Խմբագիր ՏԻ Գ Ր Ի ՍԻ,

Ձեր նորածիլ թերթն ստուգիւ- արժանի է քաջալերութեան, իւր նը- պատակի, լեզուի և նիւթոց ընտրու- լիեան տեսակէտով: Ձեր գործն ինք- րին ներքով մ'է գնահատել գիտցող ազգայնոց առջև. և ուստի աւելորդ է ու է բան յաւելուլ այս մասին: Կը մնայ միայն որ չը շեղիք ձեր նը- պատակէ, որ ժողովրդեան շահէն է, և յոյս տաք անձնական խնդիրներու միջոց լինելէ:

ՏԻ Գ Ր Ի Ս ՎԵՐԺԻՆ ԵԱՐՏԸՄ

Նիւ Եորք, Նոյ. 28, 97.

Խմբագիր ՏԻ Գ Ր Ի ՍԻ,

Ձեր թերթի առաջին թիւը չը տեսած՝ պատահմամբ մը երկրորդն կարծաւոր բաղդաւորութիւնն ունե- ցայ, որը կուգար լեցնելու իմ ամե- նաշեւմ փափաքներէս մին, և որոյ համար ամբողջ մի տարի շարաշար տեքնոյց Միծեանակ անուամբ մի ձեռագիր ամսագրի ճարտարակե- լով բայց ես առանձին չը կրցի գո- հացում տալ այն մեծ պէտքին, որն որ միակ յենակէտն է մեր ներ- կայ և ապագայ ամէն յաջողու- լիեանց: Խիստ ուրախալի է, որ այ- սոր դուք ձեր ժողովրդեան հրապարակ ե- լած կուզէք ընել, և յոյսեր շատ կան թէ պիտի ընէք, ինչ որ կը կարո- տի մեր երիտասարդութիւնը:

Ձը գիտեմ թէ ինչ կերպով կը- նամ ձեզ մի փոքր օգտակարութիւն ընել, քանի որ պարագաներ զգաց- մանցս չեն համապատասխաներ:

ԽՄԲԱԳԻՐ ԾԻՄԵՆՆԱԿԻ

Կիւ Ֆրեքի մէջ ՏԻ Գ Ր Ի Ս անունով թերթ մը լայս եկաւ անցեալ շաբաթ ժամանակի պահանջից ուղղութեամբ գործելու. յաջողութիւն կը մաղ- թենք:

Ուսիթի մէջ կը հրատարակուի «Եփրատ» անուն շաբաթաթերթ մը, և Նիւ Եորքի մէջ «Տիգրիս» անուն շա- բաթաթերթ մը. բարի գալուստ մաղ- թելով սոցա, կը սպասենք ձորոխին, Ալիսին, Երասխին, Կուրին և Գայլին գալուստ:

ՀԱՅՔ

ՊԱՆԻՈՒՆՏԵ ԱՌ ԲԵՆՐ

Սենեկում փակուած մի զուարթ իրկուն,

Ո՛հ պանդուխտ մը հէգ, մտածէր ատգոյն,

Յուզմունք, մտածմունք, իր շուր- ջը պատէր,

Ձը կար գէթ մէկը՝ որ զինքն սփոփէր:

Եւ աչքերն յառած դեպի պա- տուհան

Տեսաւ երկնքում, աստղեր պլպլը- րան,

Ու լուսնակ տակաւ, տակաւ բարձ- րանար

Իւր աղօտ լուսովն յեթերին կա- մար:

Այդ գիշերուան լուռ խաղաղիկ ժամուն,

Կը լսուէր միայն ծառոց սոսա- փիւն,

Մեղմ քամին էր այդ, որ տարու- րէրէր,

Խաղաղ գիշերուան լուսիւնն յուզէր:

Հէգն մտածէր և սիրտն այլայլած, Անթիւ հոգեբով գոգցես շուարած

Գային վրդովել թշուառին օրեր, Կեանքի դժուարին ձախորդ դիպ- ուածներ:

Կամէր այդ յուզմանց ժամեր մեղմացնել,

Միգապատ սրտին թախիծն հեռա- ցնել

Սրտի խորերէն հառաժ մ'արձա- կեց,

Վար առաւ քնարն ու այսպէս եր- գեց:

«Մաղձոտ ժամերուս սփոփող ըն- փեր,

Ինձանից անբաժան վիշտերս ես տարեր,

Թող այժմ այլ քնար, այս խաղաղ գիշեր

Մեզ ականջ գնեն, լուսինն ու աստղեր:

Բնար իմ քնար հնչէ՛ լալազին, Ի հանդէս անէ վիշտերս տխրա- գին,

Ու երգէ սե օրն թշուառներու հո- ճիւն:

Անէճքով լցուած սե գիշերակա- տին:

«Հնչէ՛, ո՛հ հնչէ՛ խորագիր օրերս Որ թշուառներու տիպարն եմ ես,

Եւ այդ նրբահիւս թեւոց վրայ առ Այս մեղմազոծոտ կեանքս վշտա- հար:

«Հնչէ՛՛ հեշտալուր մեղմիկ ու աղ- դու:

Սրտի խայթ գարձիւր անգութ մարգիթու,

Ո՛հ սրտեր յուզէ՛ ձայնովը ներ- դաշնակ,

Որ վրաս գթաւ վշտահար սոխակ, «Առաւօտեան գով մեղմիկ դեփ- իտին,

Վշտերս ձաղորդէ պանդուխտ ծի- ծեռին,

Կը թուի կերթայ նա դէպ այն եր- կիր,

Հոն, ուր մեր դարձին նային կա- րկիր:

«Նախ քան արշալոյս, դեռ հանդէպ այգուն,

Գուցէ՛ այդ խաղաղ ու լռիկ վայը- կեան

Տայ կրկինք դարման, վիշտերուս համայն:

Այդ գիշերուան խոր թախտալից ժամուն,

Ձայն մը լսուեցաւ հեզնոց բայց խոչուն:

«Ցորչափքնարով կեանք եղերբրգես, Դու միշտ մի ստրուկ դու միշտ թշուառ ես»:

Փրովիտէնս, ՆՈՅ. 23. ԱՏՈՍ

ՆԱՄԱԿ ՈՒՍՈՐԸՐԷՆ

Ուսիթը, Նոյ. 27.

Անցեալ Հինգշաբթի օր երբ Ա- մերիկացիք ուրախութեամբ եկե- ղեցի կը դիմէին շնորհակալութեան պաշտամանց ներկայ գտնուելու, Հա- յերս Լորէլ փողոցի եկեղեցին կեր- թայինք մեր 100,000 նահատակաց յի- շատակն ողբալու համար: Թէ Արժ- Մաշթոց վարդապետ և թէ Բողո- քական Հայոց քարոզիչ Պատ. Պէննէ- եան ծանուցած էին ժողովրդեան թէ այդ օր Հայք պարտաւոր էին տօնել Մայր Հայրենիքի Մարտիրոսացած զա- ւակաց յիշատակն:

Նոյն օր ժամը 11ին Ս. Պատա- րագն սկսեց: Պատարագիչ Ս. Հայրը օրուան յարմար մի ազգու քարոզ խօսեցաւ ու յորդորեց ժողովրդեան սիրով կապուած մնալ Մայր Հայրենի- քի հետ, և այս օտար երկրի մէջ ապ- րիլ սիրով ու միարանութեամբ: Այս առթիւ Արժ. Մաշթոց վարդապետ բեմէն ներքե նախքին Հոգաբարձու- թեան, օրն ինչ ինչ խնդիրներու մէջ անհամաձայնութիւններ ունեցած էր նորին Արժանապատուութեան հետ, և փոխադարձաբար ներողութիւն խնդ- րեց անոնցմէ ըսելով, «Այսօր Ս. Սն- դանին առջև, պարսակսնութիւն կը- ըզգամ ներել անոնց՝ իրենց բոլոր սը- խայններուն համար, և ներողութիւն խնդրել անոնցմէ, եթէ իրր մարդ սը- խայնական ո՛ր և է ցաւ պատճառած եմ իրենց: Ժողովուրդը շատ գոճ մնաց Հոգուի այս արժանապատուութեանցէն, որ ոչ միայն պատիւ կը բերէր իւր անձին, այլ նաև Հայ եկեղեցականու- թեան: Կէսօր էր երբ արձաւ կուեցանք եկեղեցիէն:

Ժամը 2ին Բողոքական Հայոց պաշ- տամունքն սկսեց իրենց յատուկ եկե- ղեցիին մէջ, ուր ներկայ էր հոժ բազմութիւն մը Հայոց՝ առանց կրօ- նական խտրութեան: Ս. Փրկիչ եկե- ղեցէն Հոգաբարձութիւնը երեք ան- դամներ զրկած էր պաշտօնապէս ներ- կայ լինել այս պաշտաման որ խիստ փառաւոր եղաւ ու պարագայից յար- մար: Ժամը 4 և կէսն էր երբ ժողո- վուրդը ցրուեցաւ խորին տպուկորու- թեան մը պակ: Ժամը 6է՛ առաջ ժո- ղովուեցանք նորէն Ս. Փրկիչ եկեղեց- ըն ժողովարարէր, ուր այդ երեկոյ թատերական ներկայացում մը տեղի պիտի ունենար, Բաֆֆի ՆԱՄԱԿ ՄԵՆԻՔՈՒԹԻՒՆԸ և ՂԱՐԱՐԱՆՈՒ ԱՍՏ- ՂԱԳԵՏԸ գրքերէն քաղուած:

Որոշեալ ժամուն վարդապետը բաց- ուեցաւ և գեթասպէք յաջողակու- թեամբ իրենց դերերը կատարեցին՝ գոճ ընելով հանդիսատէս՝ ժողովուր- դին: Արժ. Մաշթոց վ. յետնաւարա- ման՝ հրապարակաւ շնորհակալու- թիւն յայտնեց դերասանական խում- բին որ այնքան ճարտարութեամբ յա- ջողած էր կատարել իր դեր՝ հակա- ուակ թատերաբեմի պատկուծեան և տեղւոյ անյարմարութեան: Հարկ կը սեպենք հոս յիշել զՏիար Գառնիկ Արժուրէնի, յաջողակ դաշնակահարը, որ իր նուագածութեամբը շատ գոճ ըրաւ ժողովուրդն այն երեկոյ:

Կը լսեմ թէ դերասանական խում- բը որոշած է մի նոր թատերական ներկայացում տայ քանի մը շաբաթէն ինպատ Ուրլէ վանքի մէջ բացուած որբանոցին, որուն համար վերջերս օգ- նութիւն խնդրուած էր Ամերիկայի Հայերէն:

Այս արուելիք խաղն պիտի ներ- կայացուի երկու անգամ՝ ժողովարար- ին պղտիկութեան պատճառով, և մուտքը պիտի ըլլայ կէս տօլար: Բա- ղաբիս Հայերը, որք 6-700 հոգիի շափ են, կը յուսանք որ ուրախութեամբ յանձն պիտի առնեն օգնել այս բա- րի ձեռնարկին միանգամայն տեսնե- լով մի ազգային ներկայացում, որ շատ յաճախ տեղի-չունենար Ամե- րիկայի մէջ: Մ. Գ. Ա.

ԿՏՐՈՆ ՏԻ Գ Ր Ի ՍԻ

ԹԻԻ 4

ՆԻՒ ԵՈՐՔ, ԴԵԿՏ. 4 '97

ԳԻՆ ՄԵԿ ՄԵՆՔ

ՀԱՆԵԼՈՒԿ

Եռամսակ բառ մ'ունինք որ կը պարունակէ վեց գրքեր, ու կը նշա- նակէ մի երկոսանի շնչաւոր: Եթէ այս բառ մէջտեղէն երկուքի բաժ- նինք, գլխին մասը ներգործական բայի մը հրամայական եղանակի եղա- կի երկրորդ գէմը կը ներկայացնէ, իսկ երկրորդ մասը կը նշանակէ ձգե- լու քար: Եթէ այս բառի վերջի եր- կու ստուերը ջնջենք, մնացածը աճա- պարանք կը նշանակէ: Եթէ շնչաւորը գլխէն երկու գիր եւ պոչէն գիր մը կտրենք, մնացեալը կը նշանակէ ՊՈՉ: Ինչ է բառը:

Այս բառ պահող անձանց առաջին վեցը իրր նուէր կամ մրձանակ մէկ տարեկանէն մինչև երեք ամսական ՏԻ Գ Ր Ի Ս պիտի ընդունին: Գաղաքաց հեռաւորութիւնն նկատողութեան պիտի առնուի խմբագրութեանս կող- մէ:

ՊԱՅՄԱՆՔ

1. Պատասխաններն թղթատարով պէտք է զրկել:
2. Անոնք որ իրենց նամակաց պատասխան կ'ակնկալեն, նամակա- գրող մը զրկելու են մեզ:
3. Մրձանակ շահող այն անձինք որք կը փափաքին զայն Ամերիկայէ դուրս ազգային հաստատութեան մը նուիրել, պարտին փոթի ծախքը վը- ճարել:
4. Այս հանելուկ բաց է ամէն Հայու համար, բաժանորդ կամ ոչ՝: Բոլոր լուծողներուն անուններն պիտի հրատարակուին թերթին մէջ:

Գ. ՀԱՆԵԼՈՒԿԻ ԼՈՒՄՈՒՄՆ

Մեր երրորդ թուի մէջ հրատա- րակած հանելուկի ուղիղ լուծումն մեզ զրկած են՝ մինչ այսօր, հետեւեալ անձինք:

Մարիամ Ս. Պողոսեան, Տրք. Միհ- յան Չուխասըզեան, Մ. Ա., Մ. Մ. Մանուկեան, Մ. Ֆէրրահեան, Թորոս Պողոսեան, Ղազար Պոյա ճեան, Չարլի Գոնտազեան, Ֆ. Ս., Յ. Թորոսեան, Յ. Բաւաքալ, Գրիգոր Ոստայնիկեան, Ա. Թ., Գրիգոր Յ. Եփրեմեան, Ար- մենակ Թոփրահանեան, Ս. Մանուկ- եան և Տիկին Եարտեմեան:

Առաջին մրձանակը ստացած է Մարիամ Ս. Պողոսեան, երկրորդը՝ Ա. Մ. Չուխասըզեան, իսկ երրորդը՝ Մ. Ա.:

Պ. Ա. Չուխասըզեան իր մրձա- նակը նուիրած է Մարսիլիոյ Գրադա- րանին, իսկ Մ. Ա. իրենն նուիրած է Պոսթընի Բարեգործական Ընկերու- թեան:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

- Յ. Տ. Գ. Չըլսի—Շնորհակալ ենք. Չերյանձնարարութիւն կատարուած է:
- Յ. Պ. Չ. Լսիթէմֆըրա—Չեր ղըր- կած բանաստեղծութեան համար, ո- րով կը շատագովէք զՏԻ Գ Ր Ի Ս, շատ շնորհակալ ենք: Սակայն համեստու- թեան հակառակ է զայն հրատարակել:
- Յ. Նաշուէ—Չեր յօգուածը առած ենք շնորհակալութեամբ: Լուրեր հա- ղորդեցէք մեզ ձեր կողմի Հայոց վրայ:

ՀԵՌԱՊՐԱՆՈՒՐՔ

Վիեննա, Դեկտ. 4.—Դժգոհ Պո-
հմիացիներու և Աւստրիական զօր-
քերուն մէջ արեւնալից բաղխումներ
տեղի ունեցաւ քրակի մէջ: Բազա-
քը զինուորական օրէնքի սակ է:

Վիեննա, Դեկտ. 2.—Այստեղ կը
ծանուցուի թէ Ալպանիացիներուն ա-
պստամբութիւնը, որ պայթած էր Ի-
փէկ և Տիաքովա քաղաքներուն մէջ,
երթալով սպառնալից կը դառնայ:

Պուլկարական և Սերպիական Կա-
ռավարութիւնները արդէն շատ մը
զինուորներ զրկած են սահմանագլու-
խը: յեղափոխականներու և Տաճկա-
կան զօրքերու մէջ բաղխում տեղի
ունեցած է: 10,000 Ալպանիացիներ
ապստամբած են Օսմ. Կառավարու-
թեան դէմ:

Կ. Պոլիս, Դեկտ. 2.—Ամերիկեան
Դեսպանը նորէն պահանջած է Օսմ.
Կառավարութենէն Պարբերդի: Մա-
րաշի և Պասաքեղի մէջ Ամերիկեան
Միտինարութեան կրած ֆետաներու
փոխարէնը: Օսմ. Կառավարութիւնը
մերժեց որ և է Հատուցում ընել ա-
ռարկելով թէ Թրքական զինուորնե-
րը պատասխանատու չէին եղած վը-
նաներուն համար:

Դեսպանը կրկին անգամ դիմում
պիտի ընէ:

ՄԱՆՐԱՆՈՒՐՔ

Վերջի պահուս Ազգ. Հոգա-
բարձութեան կողմէն նամակ մը ստու-
ցած ենք յայտարարող թէ նիւթա-
կան անձկութեան պատճառաւ Հո-
գաբարձութիւնն որոշած է պաշտօ-
նէ դադարեցնել զՎահրամ Բահանայ,
որ կը լսենք թէ Եկեղեցիի գոյից
բանալիներն յանձնած է եղբր Հո-
գաբարձութեան երկու օր առաջ:
Այս նամակը կը հրատարակենք յա-
ջորդ թուով:

Այս շարժում 8 Հայ գաղթա-
կանները հասան Ամերիկայ:

Պարբերդի Պէշկէօղլուրեան
ընտանիքէն տիկին մը 5-6 օրերէ ի վեր
կսպասէ Բասըլ Կառուին: Տիկինը Պոս-
թօն, Ուսթըր և Փաթըրըն աղքա-
կաններ ունի եղբր որոնք տակաւին
չեն փութացած դիմաւորելու գինքը:
Զորքը արթի օր հայ բարեկամ մը
մեզ ըսաւ թէ Տիկին Պէշկէօղլուրե-
ան յուսահատութեան մէջ է, և լա-
լով ըսած է թէ եթէ զինքը ետ
զրկեն ինքզինքը ովկեանոսը պիտի
նետէ:

Կը խնդրուի իւր ազգականներէն
որ ըստէ առաջ գան ազատեն խեղճ
կինը:

Գեր. Տ. Վաղինակ Վարդապե-
տը կը հերքէ մեր առջի թուով վերա-
պահութեամբ հրատարակած Փրովի-
տէնսէն այն լուրը թէ երեք հա-
յեր խաբէութիւնով կը կողոպտեն
խեղճ հայէ մը 500 տօլար:

Տպագրական սխալով մը անց-
եալ շարժում մեր հրատարակած Մա-
լաթիացիներու դատին մէջ փոխա-
նակ Պ. Արշաւեանը բանտը կսպասէ ը-
սելու, Պ. Գարուսուզեանը ըսած է-
ինք. կուղղենք, վերջի պարոնէն նե-
րողութիւն խնդրելով:

Պ. Յ. Տէր-Ստեփանեան երկու
շարժէ ի վեր սկսած է Ատամնարու-
թութեան վարժարանը շարունակել:

Պ. Թ. Պասմաճեան Պ. Կ. Նա-
ճառեան Ուէսթ-Հոփքընի մէջ գնած
են Հայկական ճաշարանը:

Պրք. Գաղազպէզազեան, Մա-
թոսեան և Տէր-Յովսէփեան Ուէսթ-
Հոփքընի մէջ նպարավաճառի խա-
նութ մը բացած են:

Պրք. Սորով Բիտէրեան. Յակոբ
Գարբիշեան. և Գրիգոր Իշխանեան
Հայերուն կը ծանուցանենք թէ նիւ-
թորքի կեդրոնական թղթատարու-
թեան պաշտօնատան մէջ իւրաքան-
չիւրին համար մէկ մէկ նամակ կը
սպասէ. թող փութան պահանջել:

Փաթըրընի մէջ անցեալ շա-
բաթ երեկոյ Պ. Յակոբ Համալեան
ամուսնացաւ Օր. Չանգալեանի հետ:
Պսակի արարողութիւնը կատարեց
Արժ. Վահրամ Բահանայ:

Ֆիչպըրկ, Մէս. Նոյ. 27.

Շաբաթ օր ժամը 2ին, Պ. Գրի-
գոր Ուզունեանի ճաշարանը Կառա-
վարութեան կողմէն պաշտուեցաւ,
Զիֆը և վեց հասալ ոտտիկաններ
եկած էին, դաղտնի գարնջուր ծա-
խելուն համար. ամբողջ ճաշարանը
խուզարկեցին գտան 564 հատ լեցու-
ն գարնջուրի շիշեր: Պ. Գ. Ուզունեանը
ձերբակալեցին ու տարին գատարան,
շատ մը փաստերով չը կրցաւ արդա-
րանալ: վերջապէս տուժեց 54 Տօլ.
և ապա վերագործաւ դէպի տուն
գլխիկոր: Որչափ որ խիստ է Կառա-
վարութիւնը այս տեսակ խեղճերուն
մէջ նոյն չափ ալ սկսած են հոյերը
զգուշացնել տեղական հայրենակից-
ները: Ասկից առաջ հայ երիտասար-
դութիւնը խօսեց իրենց մանրամասն
թէ այս տեսակ առևտուր պատիւ չի
բերեր Հայութեան. քանի որ «Լայ-
նէս», չկայ քաղաքին մէջ և դուք ալ
գաղտնի կը ծախէք» օրէնքին դէմ է:

Նմանապէս ասկից 9 ամիս առաջ
ալ Պ Յովհաննէս Շահինեանը կը ծա-
խէր ճաշարանին մէջ, նոյն խայտա-
ռակութեամբ, որչափ որ խօսեցան
այնչափ ալ ընդհակառակ գործեց այս
մարդը, վերջապէս բռնուեցաւ Կա-
ռավարութեան կողմէն, տուգանք տը-
ուաւ 72 Տօլ. ապա հեռացաւ քաղա-
քէն: Գեր. Մաշթոց Վարդապետ երբ
Ֆիչպըրկ այցելեց երկրորդ անգամ,
քանի մը երիտասարդներ պարզեցին
իրեն ճաշարաններուն վիճակը, խօս-
տացաւ յաջորդ այցելութեան կարգա-
դրելու ամէն բան, բայց Կառավա-
րութիւնը չուտով կարգադրեց:
ՏՐԻԱՏ ՏԱԻՐՈՍՑԵԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ԳՊՐՈՑ ԱՆԳՈՒՆԵՆԻ
Ո՛ր և է Հայ կրնայ դիւրամտեղիք
գնեցող ուսանիլ Հասարակ ընթերցա-
նութիւն, Պատկերութիւն, Նամակա-
գրութիւն, Տոմարակալութիւն, Թուա-
բանութիւն, Առևտրական Գիտելիք,
Փեղագրութիւն, ևն ևն:

Դասեր կուսանդուին մասնաւոր
խնամօք և բոլորովին առանձին: Ման-
րամասնութեանց համար դիմել առ
խմբք. ՏԻԳՐԻՍԻ:

ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐԸ

Հետեւեալներն աննշան մաս մ'են
այն բազմաթիւ ապրանքաց զորս ու-
նինք մեր արամաղրութեան տակ իբր
նուէր տալու համար մեր կտրոններու
փոխարէն: Ասոնց բոլորի ցուցակը ան-
կարելի է հրատարակել ՏԻԳՐԻՍԻ
մէջ՝ տեղւոյ անձկութեան պատճա-
ռաւ: Այս մասին գաղափար մը տա-
լու համար կը բաւականանանք ըսել
թէ այդ ապրանքաց կատարեալ ցանկը
126 երեսներէ բաղկացեալ տետրակ
մ'է, որոյ մէջ ոչ միայն գիներն կան,
այլ ամէն իրերու պատկերներն և բա-
ցատրութիւնները գրուած են անգլի-
երէն լեզուով: Այս տետրակներէ կը
ղրկենք փափաքողաց 5 սէնթ նամա-
կադրոշմի փոխարէն:

Մեր ամէն տեսակ ապրանքներէն
կը յղենք նաև ամէն անոնց որք կտրոն
չ'ունենալով՝ դրամ կամ նամակադը-
րոշմ կը զրկեն արժէքին փոխարէն:
Փոխադրութեան ծախքը գնողնե-
մուն վրայ է:

Ա Պ Ա Հ Ո Վ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ի

Ձմրան եղանակին հետ կսկսին
հարուղիս, ուսմաթիզմ և կարգ մը
թոգային հիւանդութիւններ երևան
գալ: Նորուեկեան ձկան իւղը ան-
հաշտ թշնամի է վերոյիշեալ հիւան-
դութիւններուն: Շիշը 25 և 45 սէն-
թի կը ծախուի Հայկական դեղարանը:
Փորձեցէ՛ք:

ՈՒԻՆՏՁՐՐ ՏՐԸԿ ԸՍԹՕՐ,

ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱՐԱՆ,

472 Յրդ Ագնիւ, Նիւ Եորք:

Յ.Տ.ՍՏԵՓԱՆԵԱՆ պատիւ ունի ծա-
նուցանել թէ դեղագիրներ կը պատ-
րաստէ խիստ աժան գիներով:

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ԽԱՉԵՐԵԱՆ

ԺԱՄԱԳՈՐԾ

Թիւ 388 Յրդ Ագնիւ, Նիւ Եորք:

Կը նորոգէ, խիստ չափաւոր գը-
ներով, պատիւ և գրպանի ամէն տե-
սակ ժամացոյցներ: Բոլոր դիմող-
ներն գոհ պիտի մնան:

Ս. Ր Օ Զ Է Ն Ս Ո Ւ Է Կ

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Դերձակի վերաբերեալ ամէն տե-
սակ ապրանքներ՝ մետաքսեայ սըն-
դուս, ապրըշում, թաւիչ, կոճակ
և այլն, խիստ աժան գներով: Հայ
դերձակներուն համար մասնաւոր
ղեղը, եթէ ՏԻԳՐԻՍԸ ցոյց տան:
72 ՕՐՁՐՏ ԸՍԹՐԻՏ, ՆԻՒ ԵՈՐԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

ՇԱՀՊԱՉԵԱՆ ԵՒ ՍԱՐԱՅԵԱՆ

Թիւ 239 Իսթ 27րդ Փողոց,

ՆԻՒ ԵՈՐԿ:

Պատիւ ունին ծանուցանել թէ
Նոյ, 22էն վերջ իրենց գներուն վրա
նոր գեղջ մը ևս պիտի ընեն, ամե-
նահամեստ քանկներուն անգամ դի-
րամատեղիք ըլլալու համար: Հակա-
ռակ այս գեղջին կերակուրներուն
քանակութիւնն, մաքրութիւնն և այլ
ամէն ինչ նոյն պիտի պահուին:
Շաբաթական «պոստ», մէկ ու կէս
տօլառ, երեք ու կէս տօլառի թի-
քէթները երկուք ու կէս տօլառի
միայն:

ՃԷՅՄԸՍ ՍԱԿԸՐ

Վաճառական ամէն տեսակ ըն-
տիր ստուեղէններու, խիստ գոհա-
ցուցիչ գներով. Հայ դերձակներ կըր-
նան իրենց ստուեղէնները գնել այս
տունէն շատ աժան գներով:
246 Բանալ Ըսթրիթ

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Պ. Գ Ն Պ Գ Ա Ղ Ո Ւ Է Ս Ե Ա Ն

Թիւ 388 Երրորդ Ագնիւ,

ՆԻՒ ՈՅՐԿ:

Գիւրամատեղիք գներով արևելեան
մաքուր կերակուրներ:


ՄԵՐ ԿՏՐՈՆՆԵՐԸ

ՏԻԳՐԻՍԸ Հայ գաղթականու-
թեան մէջ տարածելու համար վար-
չութիւնն որոշած է կտրոն մը հրա-
տարակել թերթիս երրորդ երեսին
վրայ 2 սէնթի արժողութեամբ, և իբր
դրամ ընդունիլ գայն՝ փոխարէն
ի ստորեւ ծանուցուած ապրանքնե-
րէն նուէր տալու պայմանաւ, իրենց
որոշեալ գներով: Այս կտրոններու
գինն քանի մը շաբաթէն մտադիր
ենք 1 սէնթի իջեցունել: Անոնք որ
կուզեն օգտուիլ այս բացառիկ ա-
ռիթէն, աշխատելու են ձեռք ձգել
ՏԻԳՐԻՍԻ այս կտրոններէն որչափ որ
կարելի է, ու պահել գանոնք:
Ամէն 10 կտրոնի հետ 2 հատ 2
սէնթնոց նամակադրոշմ զրկուելու է
մեզ ապրանք փոխադրութեան ծա-
խուց համար:

ՄԵՐ ՆՈՒԷՐՆԵՐՈՒ ՄԷՁ

Արանց և տիկնանց համար յատուկ
զմելիներ, մասանիներ, դանդաղան
կոճակ երն ևն. բազմաթիւ տակ են:

Այս զմելիներու հատը մ'այ



ԿԱՐԺԷ 24 ՍԷՆԹ,


ԱՅՍ ԿԱՆԱՆՑ ԱՍԵՂՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ



պէտք չէ բացատրութիւն: Կանայք
գիտեն անոնց կարևորութիւնն:

ՄԵՆԻ ԽԱՂԱՂԱՍԷՐ ԺՈՂՈ-

Վուրդ ենք. և ստորճանակի պէտքը
քիչ անգամ կըզգանք: Պէտք է հատ
մ'ունենալ սակայն, զի անոր պէտքը
կենաց և մահու խնդիր է երբեմն:
Աժան տեսակներ ունինք,



ԲԱՅՑ ՍԱ ԿԱՐԺԷ 1 ՏՈՒ 75 ՍԹ

ԱՁԴ

Պատիւ ունինք ծանուցանել թէ
ՏԻԳՐԻՍԻ տպարանին մէջ կը տպուի,
ծանուցումներ, այցետոմս, տետրակներ
և այլ ամէն տեսակ գործեր. գոհա
ցուցիչ գներով: Մեր տպարանին մէջ
տպուած յոգային և կրօնական հրա-
ւիրագիրները կարտատպենք նաև ՏԻԳ-
ՐԻՍԻ մէջ առանց աւելորդ ծախքի: